ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2024 թվական, N 30-Ա

«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՓԸՐ ՓՐՈԳՐԱՄ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊՂՆՁՆԱՁՈՒԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՈՒ ԴՐԱ ՀԵՆՔԻ ՎՐԱ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սպանդարյան փողոց (նախկին՝ Կիրովի փողոց) 4 հասցեով գտնվող՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ Ալավերդու պղնձաձուլական գործարանի արտադրական տարածքում ու դրա հենքի վրա հետևյալ տեսակներով նախատեսվող արտադրական գործունեության իրականացման համար՝
   1) Պղնձակիր հումքի (այդ թվում՝ պղինձ պարունակող հին լցակույտերի լեռնային զանգվածների, պղինձ պարունակող ապարների և/կամ առաջնային հանքաքարի, պղինձ պարունակող հումքի մետալուրգիական վերամշակման արդյունքում գոյացած խարամի) վերամշակում ֆլոտացիոն եղանակով՝ տարեկան մինչև 100 հազար տոննա արտադրողականությամբ.
   2) Պղնձակիր հումքի (այդ թվում՝ պղնձի խտանյութերի, պղնձի հանքաքարի, պղինձ պարունակող հումքի մետալուրգիական վերամշակման արդյունքում գոյացած խարամի) տարրալվացում APL (Atmospheric Polymineral Leaching) տեխնոլոգիայով, տարեկան 2.000 տոննա պղնձի հաշվարկով (արտադրողականությամբ).
   3) Տարեկան 2.000 տոննա պղնձի հաշվարկով (արտադրողականությամբ) կատոդային պղնձի արտադրություն SX-EW (Solvent Extraction-Electrowinning) տեխնոլոգիայով.
   4) Տարեկան 2.000 տոննա պղնձի հաշվարկով (արտադրողականությամբ) պղնձի փոշու արտադրություն ցեմենտացիոն մեթոդով.

5) Պղնձե գլոցուկի արտադրություն՝ տարեկան 1.000 տոննա, 8մմ և (կամ) 13մմ տրամաչափով գլոցուկների թողարկման արտադրողականությամբ.
6) Պղնձե խողովակների արտադրություն՝ տարեկան 1.000 տոննա արտադրողականությամբ.
7) Պղնձե փայլաթիթեղի արտադրություն՝ 9-100 միկրոմետր հաստությամբ և տարեկան 200 տոննա արտադրողականությամբ.
8) Պղնձարջասպի արտադրություն՝ պղնձի ջարդոնի կամ պղնձի սուլֆատի լուծույթի խածատմամբ.
9) Ցեմենտացիոն պղնձի լուծույթներից երկաթարջասպի արտադրություն՝ տարեկան մինչև 10.000 տոննա արտադրողականությամբ.
10) Գունավոր մետաղների համաձուլվածքների արտադրություն.
11) Մետաղափոշիների հիմքով ներկերի արտադրություն.
12) Ցածր ջերմաստիճանային զոդանյութերի արտադրություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			

12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ԶԱԽԱՐՈՎ			
15.	ՏԻԳՐԱՆ	ՊԱՊՈՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մարտի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի